

2597

С.1930/152


ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՄՈՒՐՃ-ՄԱՆԳԱՆ“

ՆՈՐ ԵՏՍԱՊՈՂԻՄ

(Ընկ. Վ. ԻՎԱՆՈՎԻ ՁԱՌԸ ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ՀՅՈՒ-
ՍԻՍԱՑԻՆ ԿՈՎԿԱՍԻ 8ԵՐԿՐՈՄԻ Յ-ՐԴ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ—
1930 թ. ՀՈՒՆԿԱՐ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОЗЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՏՈՎ. Դ-Վ.
1930



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՄՈՒՐՑ-ՄԱՆԳԱՆ“

С-
Са2205

338.1(47)
h-85

ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

(Հնկ. Վ. ԻՎԱՆՈՎԻ ՃԱՌԸ ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ՀՅՈՒ-
ՍԻՈՂԻՆ ԿՈՎԿԱԾԻ ՅԵՐԿՐԿՈՄԻ Յ-ՐԴ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ-
1930 Բ. ՀՈՒՆՎԱՐ)



ԽՈՍՀԱՎ Դ-Վ.
1930

(29 APR 2013

30.154

ՆՈՐ ԵՏԱՊՈՒՄ

(Ընկ. Վ. Խվանովի նառ Համկոմկուսի (բ) Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի 3-րդ պր-լենում— 1930 թ. հունվար)

НА НОВОМ ЭТАПЕ

(Речь тов. В. Иванова на 3-м пленуме Сев.-Кав. Крайкома ВКП (б)—январь 1930 г.)



60431-67

Крайлит 9-70 Ростов н-Д. Газетн.-книжн. тип. СКПТ
Заказ № 2657 Тираж 2000 Ст.-ф. А6 105x148

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳԵՐԱԿՇՈՒԾ ԿԱՄԻՏԱԼԻԶՄԻ
ՀԱՆԴԵԹ ՎՃՈՌՆԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԴԱՐՁԱՎ

Մեր սոցիալիստական հեղափոխության զարգացման մեջ մենք մի լուրջ ետապ ենք ապրում։ Այս ապացուցում են փաստերը.—մեր յերկրի սոցիալիստական տնտեսության արտադրական ուժերի զարգացման չտեսնված տեմպերը,— այն, վոր հնդամյակը գերազանցվեց տնտեսական հրակայածավալ հնարավորությունների հետևանքով, վորոնք բացվում ու զորահավաքվում են պլանացին սոցիալիստական տնտեսության սիստեմով (մենք ստիպված ենք հնդամյակում մի շարք ուղղումներ մտցնել— նրա կատարման ժամկետը կարձացնելու ուղղությամբ),— չե՞ վոր

Արանք փոքր ու անկարեսոր փաստեր չեն: Այս
բոլորը տեղի յե ունենում հաղթանակած պրոկ-
տարիատի յերկրում, վերը (պրոլետարիատը) ի-
րականացնում ե իր դիկտատուրան կազմական
տական շրջափակման մեջ գտնվող ԽՍՀՄ-ում և
վորը սոցիալիզմ ե կառուցում միմիայն իր ներ-
քին ռեսուրսները զորահավաքելու հիման վրա:
Յեկ նույն իսկ այդ պայմաններում սոցիալիս-
տական տնտեսությունը ցույց է տալիս մարդ-
կության պատմության մեջ չտեսնված արտա-
դրական ուժերի վերելքի տեմպեր: Մենք արա-
գորեն առաջանում ենք դեպի այն, ինչի մասին
կենինը խոսում եր խորհրդների Vlll համագու-
մարում:—

«Կոմունիզմը— այդ Խորհրդային իշխա-
նությունն ե, պլյուս ամբողջ յերկրի ելեք-
տրոֆիկացիան: Միայն այն ժամանակ, յերբ
յերկրը կ, ելեքտրավորվի, յերբ ժամանակա-
կից խոշոր արդյունաբերության տեխնիկա-
կան բազան հիմք կդառնա արդյունաբերու-
թյան, գյուղատնտեսության ու արանս-
պորտին— միայն այն ժամանակ մենք
վերջնականապես կհաղթենք»:

Այս բանը պարզ դարձավ վոչ միայն մեր կու-
ռակցության, այլ և բանվոր դասակարգի համար,

վորը հիմա ի վիճակի յե, յեթե կարելի յե այս-
պես արտահայտվել, ձեռներով շոշափել սոցիա-
լիզմի աճումը: բանվորի համար հիմա պարզ են
սոցիալիզմի առաջնորդացի կոնկրետ հեռանկար-
ները: Այսպիսառ մենք բեկալիունի ենք մեր եկոնո-
միկայի զարգացման այն ուղանք, յերբ սոցիալիզմի
գերակշռությունը կապիտալիզմի հանդեպ դարձել ե
վճռողական իրականություն:

Այս արդյունքներից կարելի յե գալ հետեւյալ
յերեք յեղակացության:—

Առաջին.— մեր յերկրը, վորաեղ տնտեսու-
թյան զարգացման լիմիտը յեղել եր գյուղացիա-
կան սահմանափակությունը, փոսկում և մի յեր-
կրի, վորտեղ վճռողական և գառնում սոցիալիս-
տական խոշոր ինդուստրիան: Վերջինս ապահո-
վում ե սոցիալիստական ընդլայնված վերաբար-
դրության չտեսնված տեմպերը, իսկ այս հանդի-
սանում և հիմնականը՝ պլոտեստարական հեղափո-
խության ու սոցիալիզմի ուժերի զարգացման
մեջ: Այժմ մենք արգեն մոտ ենք լիովին իրակա-
նացներու այն, ինչի մասին իւլիչը խոսւմ եր
մի ժամանակ, վորպես մեր, իրագործվելիք խըն-
դրի մասին:—

«Արդյոք այդ չի՞ լինի գյուղացիական
սահմանափակության թագավորություն: Վոչ:

Յեթե մենք բանվոր դասակարգին վերապահենք գյուղացիությանը զեկավարելը, ապա մենք հնարավորություն կստանանք մեր պետության մեջ տնտեսության մեծագույն եկոնոմիայի գնով հաջողեցնել այն, վոր ամեն տեսակ չնշին խնայողությունը պահպանվի մեր մեքենայական խոշոր ինդուստրիայի, ելեքտրոփիկացիայի, հիգրոսորֆի զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցման համար և այլն։ Դրանում և միայն դրանում ե մեր հույսը։ Միայն այդ ժամանակ մենք ի վիճակի կլինենք, պատկերավոր ասած, մի ձիուց նստել մյուս ձիու վրա, այն ե՝ գյուղացիական, մուժիկական, տնանկացած ձիուց, գյուղացիական ավերված յերկրի ձիուց այն ձիու վրա, վորին փնտրում ե և չի կարող իր համար չփընտրել պրոլետարիատը, — խոշոր, մեքենայական ինդուստրիայի, ելեքտրոփիկացիայի, Վոլխովստրոյի և այլն ձիու վրա»*):

Յերկրորդ. — Հսկայականորեն աճել ե սոցիալստական ինդուստրիայի առաջնորդող ազգեցությունը գյուղատնտեսության վրա, վերջինս

*.) Հոդվ. — «Լավ ե քիչ, բայց ավելի լավ»

մանր-ապրանքային վիճակից խոշոր, համայնացված յերկրագործության փոխելու մեջ։ Արդյունաբերության աճումը, գյուղացիական մանր ապրանքային, կոտորակված տնտեսությունը սոցիալիստական զարգացման ձանապարհի վրա փոխադրելու մեջ նրա դերի ուժեղացումը հասցընել ե այն գրության, վոր միջակների հիմնական մասսան թափկում ե կոլխոզի մեջ։ Միջակը համոզվեց, վոր այդ ձանապարհը գերադասելի յե և վոր իսկապես պրոլետարիատի դիկտատուրան, բանվոր դասակարգի զեկավարությունը ապահովում են ինդուստրիայի այնպիսի զարգացում, վորըն ի վիճակի յե վերակառուցել նրա տնտեսությունը նոր տեխնիկայի հիմունքով և խոշոր, համայնացած անտեսության միջոցով ապահովել վերջինիս ամենաարագ վերելքը, լուծել գյուղի նյութական գրության արմատական բարելավման խնդիրը։

Յեվ յերրորդ. — տվյալ մոմենտին ճշգրիտ կերպով վորոշվել են լուրջ առաջխաղացումները գեպի խոշոր, համայնացված արտադրություն։ Ակներեւ գարձավ, վոր մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու ներկա տեմպերի համար գյուղացիական անհատական տնտեսության շրջանակները չափականց նեղ են։ Գյուղացիական անհատական

տնտեսությունն արդեն իսկ շինարարության տվյալ աստիճանի վրա՝ չի ապահովում մեր ինդուստրիայի լայն վերելքը (պարենով, հումութով և այլն): Ուղղակի կերպով դրվեց սովորութիւնների շինարարության, ՄՏԿ և կունկտիվացման հնարավորին չափ արագ տեմպերի, գյուղացիան մանր, կոտորակված տնտեսությունները զեղի խոշոր, համայնացված տնտեսության ռելաները փոխադրելու հնարավորին չափ արագ տեմպի հարցը:

Հիմա արդեն կարելի յե խոսել հենց գյուղատնտեսության ինդուստրացման մասին, վորպես ամենամոտիկ հեռանկարի: Զե՞ վոր, ընկերներ, խորհրդային տնտեսությունները, մեքենա-արակտորային կայաններն արդեն ինդուստրիալ խոշոր, հսկայական յերկրագործության տիպեր են: Այդ մի նոր շարիխ ե, վորը չտեսնված հնարավորություններ ե բաց անում ԽՍՀՄ ամբողջ տնտեսության զարգացման համար: Այստեղ ե սոցիալիստական տնտեսության ամենահզոր առավելություններից մեկը կապիտալիստական տնտեսության հանդեպ: Կապիտալիստական կազմվածքների պայմաններում յերկրագործության զարգացումը կաշկանդված ե—բուրժուական յերկրներում ռենտան և հողի մասնավոր սեփակա-

նությունը հանդիսանում են այն կապանքները, վորոնք սահմանափակում են գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները և դժվարացնում են նրա անցումը խոշորագույն կապիտալիստական տնտեսության ռելաների վրա: Մեր գյուղատնտեսության վիթխարի հսկաներ—սովորութիւնները— իսկ սրանք Խորհրդային Միության մեջ տարեցտարի կշատանան— իրենց ծավալով և տնտեսության կազմակերպմամբ չեն կարող մրցակիցներ ու ընդորինակողներ ունենալ կապիտալիստների մոտ: Այդպիսի խոշոր տնտեսություններ կապիտալիզմն ստեղծել չի կարող և պատահմամբ չե, վոր կապիտալիզմի ունեցած ամենախոշոր տնտեսությունը դա Կեմպրելի տընտեսությունն ե, վորն ունի միայն 30,000 հեկ. հող: Ռենտան և հողի մասնավոր սեփականությունը սահման են դնում այդ տնտեսությունների զարգացման և նրանց սահմանափակում վորոշը շրջանակներով: Մեզանում ռենտա և հողի մասնավոր սեփականություն չլա, պրոլետարիատը գյուղատնտեսությունից հանել ե այդ շղթաները: Կապիտալիզմի հանդեպ մենք հսկայական առավելություններ ունենք:

ԽՆԴԻՐԸ ԴՐՎԱԾ Ե ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ընկերներ, մեր կուսակցությունը գիտե մեր պրոլետարական հեղափոխության զարգացման խոշորագույն ետապները։ Այդպիսի խոշորագույն ետապներից մեկը յեղել և նեպը։ Մեր այժմյան լեռնանցքը իր նշանակությամբ պակաս չե։ Յուրաքանչյուրի համար պարզ ե, վոր արմատապես փոխվում են արտադրական հարաբերությունները և յերկրի ներսում բոլորովին տյլ կերպ և դրվում դասակարգային հարաբերությունների հարցը։ Տվյալ շրջանի բնորոշ գիծը հանդիսանում է կապիտալիզմը աճեցնող, նրա համար սննդարար հող ծառայող մանր ապրանքային արտադրությունից դեպի խոշորը, հասարակականն անցնելը, վորը խորտակման և դատապարտում կապիտալիզմին։ Հենց այս հանգամանքից յեխելով հարավոր և անհրաժեշտ դարձավ հարց գնել վոչ միայն պայքարել մասնավոր կապիտալիստական տարրերի դեմ, վոչ միայն սահմանափակել նրանց, այլև վոչնչացնել կապիտալիստներին, բուրժուազիային, իրեն դասակարգ։

Մեր ապրած եպիխայի նշանակությունը ընդգծում ենակ այն հանգամանքով, վոր մենք

ընդհանուր մոտեցել ենք «մեր զրության յուրահատկությունը» վերակետելուն, սա արտահայտվում է հինգ դանական հասարակական տնտեսական կազմվածքներով, վորոնց մասին խոսում եր լենինը, ինը պատճառաբանում եր մեր յերկրում պետական կապիտալիզմի անհրաժեշտությունն և նեպին անցնելը։ «Պարենհարկի մասին» հոդվածում նա գրում եր—

«Բայց ի՞նչ ե նշանակում «անցում» բառը. Զի՞ նշանակում արդյոք նա, եկոնոմիկայի վերաբերմամբ, վոր տվյալ իրավակարգում կան կապիտալիզմի ու սոցիալիզմի տարրեր, մասնիկներ, բեկորներ։ Ամեն վոք կը դուռնե, վոր այսուհետեւ ամեն վոք, ընդունելով այդ, խորհում ե այն մասին, թե ի՞նչ պիսին են Ծուսաստանում յեղած դանական հասարակական տնտեսական կազմվածքների տարրերը, իսկ հարցի կարեռագույնը դրանումն ե։ Թվենք այդ ասարերը։ Առաջինը—նահապետական, այսինքն նշանակալից չափով նատուրալ գյուղացիական տնտեսությունը։ Յերկրորդը— մանր ապրանքային արտադրությունը (սրան վերաբերում ե գյուղացիների մեծամասնությունը, նրանցից ով հաց և ծախում), Յերրորդը— մասնավոր

տնտեսական կապիտալիզմ, չորորդը, — պետական կապիտալիզմ, հինգերորդը — սոցիալիզմ: Ռուսաստանն այնքան մեծ և ուժաբետ, վոր հասարակական — տնտեսական կազմվածքի այդ բոլոր տարրեր տիպերը խճճվում են նրանում: Դրության յուրահատկությունը հենց դրանումն ե»:

Գործն անկասկած գնում և դեպի տյն, վոր հասարակական-քաղաքական այդ հինգ կազմվածքից մեկն ավելի ու ավելի արագ պիտի ձևավորվի — այդ սոցիալիստական, հասարակական-տընտեսական հարաբերությունների կազմվածքն ե: Անմին այդ նույն հոդվածում ցույց եր տալիս այն ճանապարհը, վորով պիտի ավարտվի «հինգ կազմվածքներից» դեպի սոցիալիզմ անցնելը:

«Մանրիկ տնտեսատերերի կոռպերացիայից դեպի սոցիալիզմ անցնելը մանր արտադրությունից խոշորին անցնեն և, այսինքն այդ անցումն ավելի բարդ և, բայց և բնդունակ և հաջողության դեպքում ընդգրկելու ընակչության ավելի լայն մասսաներ, ընդունակ և պոկել հին, մինչսոցիալիստական, նույն իսկ մինչկապիտալիստական հարաբերությունների ավելի խորն, ավելի կենսունակ արմատները, վորոնք ամենահամառն

են ամեն տեսակ «նորույթի» ընդդիմանալու իմաստով»:

Ուրեմն, մանր արտադրությունից խոշորին անցնելը, ինչպես ասել եր Լենինը, մեզ համար ապահովում և նույն իսկ մինչկապիտալիստական հարաբերությունների խորը և կենսունակ արմատների վոչնչացումը: Այժմ, յերբ պարզ պատկերագործում են մանր ապրանքային արտադրությունից դեպի խոշոր, համայնացված յերկրագործությանը մասսայորեն անցնելու ուրվագծերն ու մասշտաբները, մենք իրավունք ունենք այդ լինինյան ցուցմունքը վերականգնել մեր հիշողության մեջ և նրա հիման վրա յեղակացություն կազմել վճռականապես դեպի սոցիալիզմ անցնելու մասին — այն չորս հասարակական-տնտեսական մինչսոցիալիստական կազմվածքներից, վորոնք մինչև հիմա կաշկանդել ու զգվարացրել են սոցիալիզմի շինարարության արագ տեմպը:

Այդպիսի հարցադրումն ազգային շրջանների համար հնարավորություններ գտնելու և մեր գիծը վորոշելու մեջ շատ բան և վճռում: Ազգային շրջաններում տեղի ունեցող պրոցեսները և նրանցում սոցիալիստական շինարարության խնդիրները վորոշել ու ծրագրել մեր ընդհանուր իրականությունից, մեր ընդհանուր եկոնոմիկայից,

յերկը թանտեսության սոցիալիստական վերակառուցման ընդհանուր պրոցեսներից, ԽՍՀՄ-ում դասակարգերի փոխհարաբերություններից չհղոքացված— վոչ մի կերպ չի կարելի. Ազգային շրջաններում սոցիալիստական վերակերտումը կանխորոշում են՝ Խորհրդայի Միության բանվոր դասակարգի ղեկավարող դերի ամրապնդումը, ԽՍՀՄ-ում սոցիալիստական ինդուստրիայի աճումը— ահա վճռական ֆակտորներ, վորոնք մեզ համար ապահովում են հասարակական—տնտեսական կազմվածքի փոփոխումը նաև ազգային շրջաններում, վորը (կազմվածք) մասնավորակես բնորոշվում է նաև սինչկապիտալիստական հարաբերությունների մնացորդներով.

ԿՈԼԽՈԶԸ-ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԵՎՆ Ե

Կանգ առնելով այս հարցի վրա, ինձ թվում ե, վոր այստեղ պետք է պատասխանել նաև կոլխոզի բնության վերաբերող հարցին, վորովհետեւ վոմանք փորձում են վիճելի դարձնել նրա տնտեսության սոցիալիստական բնույթը:

Ճիշտ ե, այդ հարցը պարզաբանել ե կուսակցությունը, բայց ինձ թվում ե, վոր Յերկրկոմի

ոլլենումում պետք է վերադառնալ այդ հարցին, վորովհետեւ, յերբ սենք խոսում ենք խոշոր, համայնացված յերկրագործության մասին և այդ համագործ ենք սոցիալիզմի տճան հետ, վարոշում ենք այն իրք մի մոմենտ, վորն ամրապնդում է բանվոր դասակարգի դիրքերն ու սոցիալիզմի հաջողությունները, ապա հարկավոր և պարզ պատասխան, արդյո՞ք այդ այդպես ե: Այդ հարցի պատասխանը— և պարզ պատասխանը— ունի կենինը, մասնավորապես՝ իր «Կոոպերացիայի մասին» հոդվածում: Ահա նրա մի շաբթ գնահատականները:—

... Արտադրության միջոցների նասարակական սեփականուրյան, բուրժուազիայի դեմ պրոլետարիատի դասակարգային հաղթանակի դեպքում, հաղթակրթված կոոպերատորների իրավակարգը— այդ սոցիալիզմի իրավակարգն ե... Մեր, գոյություն ունեցող իրավակարգի ժամանակ կոոպերատիվ ձեռնարկությունները մասնավոր կապիտալիստական ձեռնարկություններից զանազանվում են իրքն կունեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն զանազանվում սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե նրանք հիմնված են հասարակական հողի վրա, ունենալով պետությանը,

այսինքն բանվոր դասակարգին պատկանող
արտազրության միջոցներ»:

«Անք պայմաններում կոռպերացիան հա-
ճախ և հաճախ զուգաղիպում և սոցիալիզ-
մին»...

«Այժմ մենք իրավունք ունենք ասելու, վոր
կոռպերացիայի պարզ աճումը մեզ համար
նույնատիպ և (վերը մատնանշված «փոքր»
բացառությամբ) սոցիալիզմի աճման հետ»...

Ինձ թվում ե, վոր այդ բավականաչափ ճշգր-
րիտ և վարողում մեր կոլխոզների բնությունը.
Պրոլետարիատի զիկտատուրայի ժամանակ կոլ-
խոզն անկասկած տնտեսության սոցիալիստական
ձեւ: Զե՞ վոր մենք ել մինչեւ հիմա պարզ կոռպե-
րացիայի աճումը համադրել ենք սոցիալիզմի աճ-
ման հետ և յերբ վորոշել ենք ժողովրդական տըն-
տեսության սոցիալիստական տարրերի տեսակա-
ռար կշիռը, կշեռքի թաթի վրա դրել ենք նաև
մեր կոռպերացիան, վորպես սոցիալիզմի տարր:
Ինձ թվում ե, վոր այդ հարցի առթիվ ընկեր
Ստալինի իւլույթն ազրաբնիկների առաջ վերջ և
դրել կոլխոզների բնության վերաբերյալ ամեն
տեսակ կասկածներին և հակալենինյան ասեկո-
սներին:

Բայց դրա հետ մեկտեղ մենք պետք ենախա-

զգուշացնենք կոլխոզների իդեալականացման դեմ՝
ԶԵ՞ վոր կոլխոզիվացման զարգացումի տվյալ
շրջանում կոլխոզնիկը դեռ պիտի յերկուանա հա-
սարակական տնտեսության և իր մասնավոր տըն-
տեսության մասցը միջև: Մի կողմից նա
կուրգրավվի համայնացված արտադրության մեջ,
մյուս հողմից— կապված և իր մասնավոր ծիփ
հետ, վորտեղ իր ընտանիքի պահանջները բավա-
րարելու համար նա գեր թողել և հավը, յերբեմն
խոչկորը, կովը և այլն:

Կոլխոզային մասսայի մեջ յուրահատուկ հա-
րաբերություններ կմտցնե նաև այն հանգաման-
քը, վոր միջակը կոլխոզ կերթա մեծ փայով, քան
սակավագորը—և կոլխոզից կստանա ինչ-վոր տո-
կոս իր մուծման համար: Այսպիսով աշխատանքի
արդյունքները կը աժանանքին վոչ միայն ըստ գոր-
ծադրված աշխատանքի քանակի, այլև ըստ առան-
ձին անտեսությունների կոլխոզը մուծած ինչքի,
վորի չափերը կանխորոշված են այս կամ այն
անտեսության մինչ կոլխոզ մտնելն ունցած մա-
կարդակով:

Կոլխոզների իդեալականացումը մեզ համար
գտանդավոր և նաև այն պատճառով, վոր նա զի-
նաթափում և կուսակցական կազմակերպությանը՝
կոլխոզային մասմասավերաբարակաման, հին

սովորույթների ու հոգեբանության բեկման համար յեռանդը, ույժերն ու կամքը գործադրելու իմաստով։

Զե՞ վոր չպետք ե նաև մոռանալ վոր կոլխոզում կլինեն դասակարգային պայքարի մի քանի տարրեր, վորը բոլորովին անվիճելի յե։ Դրանք կոլխոզ կրիրվեն նաև դասից, կուլակի կողմից, իրը նրա փորձերը՝ ազդելու կոլխոզիկների անկայուն տարրերի վրա և կոլխոզի քայքայման համար ոգտագործելու հողագործի անհատապաշտական, սեփականատիրական հոգեբանությունը։ Կուլակը պիտի պայքարե վոչ միայն կոլխոզից դուրս և պիտի փորձե ամեն կերպ վիճեցնելու կոլեկտիվացումը, այլ և նա այս կամ այն կերպ, այս կամ այն ձեռվ պիտի փորձե ոգտագործել ամեն տեսակ միջոց և հնարավորություն՝ կոլխոզը ներսից պայթեցնելու, սոցիալիզմի դեմ պարագելու համար։

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀՄՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԿԵՐՊ ԵՆ ԴԱՍԱՎՈՐՎՈՒՄ

Մենք վկա յենք այն փաստին, վոր բանվոր դասակարգի զինակցությունը գյուղացիության հետ՝ մտել և իր գարգացման բարձրագույն ըըր-

ջանը։ Այն, վոր նրա բաղան այժմ շուկայական ոելսներից անցել և արտադրական ոելսների վրա, վոր գյուղական անհատական տնտեսությունը անցնում է խոշոր, համայնացած տնտեսության և վոր վերջինիս զարգացումն ավելի արագ և արագ պիտի ընթանա ինդուստրացման և տեխնիկական վերասպառապինման գծով, — այս մեղ իրավունք և տալիս հարց դնելու, վոր մենք թեակոխել ենք մի շրջան, յերք պիտի ջնջվեն ու վոչնչացվեն քաղաքի ու գյուղի, բանվորի ու գյուղացու միջն յեղած սահմանները, տարբերությունն ու հակասությունները։ Հիմա այս չի հանդիսանում ուտոպիա կամ մի ինչ - վոր չափազանց հեռավոր պերսպեկտիվա, Բանվոր դասակարգի հարաբերությունները գյուղացիության հետ տվյալ գծով պիտի առաջանան արդեն ամենամոտ ժամանակներում։

Այսպիսով դասակարգային հարաբերությունների մեջ արմատական փոփոխություններ են մացվում — բանվոր դասակարգի և գյուղացիության հիմնական մասսաների զինակցության բազաի տեղափոխումը արտադրական ոելսների վրա, բանվոր դասակարգի ու գյուղացիության հարաբերությունների զարգացման թեակոխումը այն բարձրագույն շրջանը, յերք այդ հարաբերություն-

Ները այնուհետև պիտի ընթանան այդ յերկու ւղասակարգերի հակառակությունների ջնջման գծով— և, վերջին հաշվով, հենց դասակարգերի վոչընչացումը:

Գյուղում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով (մանրապրանքային արտադրության անցումը կոլեկտիվ արտադրության) այժմ այլ կերպ են դասավորվում նաև դասակարգային հարաբերությունները: Հիմա բոլորի համար արդեն տարգ ե դարձել, վոր մոմենտի խնդիրն և վոչ այնքան մասնավոր՝ կապիտալիստական տարրերը սահմանափակելը, նրանց գուրս վոնդելը, վորքան ուղղակի ստավկան, ամենավճռական, ակտիվ քաղաքականությունը, կուլտակությանը վորպահն զասակարգ, վոչնչացնելու գիծը: Խնդիրը դնելու ճշտությունը և այդ խնդրի ակտուալ լինելը բարում են դեպի խոշոր, համայնացված տընտեսությունը յեղած առաջնազացումից, վորը քանդում և մասնավոր կապիտալիստական տարրերի աճման հիմքը: Մեր այդ գծի իրականացումը ներկա շրջանում անխուսափելիորեն պիտի առաջ բերի մասնավոր կապիտալիստական տարրերի դիմադրության ու պայքարի բարձրացում: Դասակարգային պայքարն ընդունում է ամենա սուբ ձևեր: Յեվ, հասկանալի յեւ չե՞ վոր ինդիրը

վերաբերում ե դասակարգի մահվան, իսկ դասակարգը պատմական բեմից առանց կովի և կատաղի դիմադրության հեռանալ չի կարող: Բոլոր միջոցները, բոլոր ուժերը, վոր կուլակը կարող է զորահավաքել նա պիտի փորձե շարժման մեջ դնել, նա այժմ պիտի նետվի դեպի ամենահուսահատական գործողությունները, նրա առաջ, վորպիս դասակարգի, կա մի դիկեմա, —կամ հաղթել կամ մեռնել. ուրիշ վօչինչ չի մնում ընտրելու:

Կուլակությանը վորպես դասակարգ վոչնչացնելու՝ կուսակցության դրութով ամենեին չի վերացվում նրա (կուսակցության), բանվոր դասակարգի, գյուղացիական չքավորության ուժերի զորահավաքը, նրա (գյուղական չքավորության) ամենամեծ չափով ակտիվացումն ու կուսակցության շուրջը համախմբելը, վերջինիս և խորհրդների ազդեցության ամրապնդումը միջակի վերաբերմամբ: Ենք այս—նրա համար, վոր դասակարգային սրված պայքարի ներկա ետապում մենք ընդունակ լինենք մինչև վերջ տանել կուլակին վորպես դասակարգ, վոչնչացնելու վերաբերյալ կուսակցության զլխավոր գրութը:

Խնչպես յես արդեն մատնանշեցի, արմատական առաջինադաշումներ տեղի յեն ունենում նաև

գյուղացիության հիմնական մասսաների հետ բան։
վոր դասակարգի ունեցած հարաբերություններում։

Նրանց հարաբերությունների հիմունքում մըտ-
ցվում են նոր տարրեր։ Բանվոր դասակարգի ու
միջակի գինակցության հիմունքը մի կողմից տե-
ղափոխվել և շուկայական ռելաներից դեպի ար-
տադրականը, մյուս կողմից—դեպի բանվոր դա-
սակարգի ունակությունը—կատարել զեկավարող
և կազմակերպչական դեր՝ անհատական մանր
անտեսությունից հաջողությամբ և արագությամբ
խոշոր, համայնացված գյուղատնտեսության անց-
նելն ապահովելու մեջ։

Այսպիսով, բանվոր դասակարգի ու գյուղացի-
ության ուղիղ փոխհարաբերության, նրանց զի-
նակցության հարցը վճռվում և հետեւալ գծով։—
—քաղաքը արտադրական ոգնություն և հասցնում
գյուղին, վորը կանխորոշվում և սոցիալիստա-
կան ինդուստրիայի աճով։ Այդ հարցը վճռվում և
այն գծով, թե վորքան նա (սոցիալիստական ին-
դուստրիան) կկարողանա վորեն ամենամոտ ժա-
մանակում գյուղ նետել գյուղատնտեսական բարդ
մեքենաներ (տրակտորներ, կոմբայններ), արհես-
տական պարարտանյութեր և այլն։ Իսկ այդ նշա-
նակում և խոշոր գյուղատնտեսությունը հիմնա-
վորել նոր տեխնիկայով, վերասպառագինել նրան

ու սոցիալիստական յերկրագործության զարգաց-
ման և շեշտակի ու չտեսնված վերելքի արտադր-
րական հնարաբորություններ ստեղծել, զորն ա-
պահովում ենակ գյուղացիության հիմնական մաս-
սաների նորութական մակարդակի արագ բարձրա-
ցումը։ Ահա թե հիմա ինչն ե վճռում բանվոր
դասակարգի և գյուղացիության ուղիղ հարաբե-
րությունների հարցը։ Այս իրականացնելու դեպ-
քում, ամենամոտ պատմական ժամանակներում,
բանվոր դասակարգի ու գյուղացիության հիմ-
նական մասսաների գինակցությունը լրջորեն ամ-
րագնելու ճամբով գործն ավելի առաջ կգնա,

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ—ԿՈԼԵԿՏԻՎ ՅԵՐԿՐԱ- ԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Ցերկորդ մոմենտը, վորը վճռում և ալդ զի-
նակցության ամրապնդումը, կայանում և հետեւ-
յալում։—պրոլետարիատը—գյուղացիության վե-
րաբերմք զեկավարող դասակարգը—կարողա-
ցավ ցույց տալ սոցիալիստական խոշոր գյուղա-
տնտեսության հաջողության մի շաբթ լուրջ որի-
նակներ (սովխոզներ և կոլխոզներ) և այցպիսի
տնտեսության առավելությունն ու ոգտագիտու-
թյունը մանր, կոտորակված, անհատական տնտե-

սության հանդեպ, վորը աճող արդյունաբերության գոյությամբ պայմանավորեց մասսայական կոլխոզարժումը:

Զքափորն ու միջակը մասսայաբար գնացին կոլխոզ: Բայց այս դեռ չի նշանակում, վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցան հարցն արդեն լուծված եւ:

Հիմա բանվոր դասակարգի առաջ կանգնած ե մի ավելի բարդ խնդրի լուծումը—յերկրագործության մեջ ոգնության հասնել ու մասսայական մասշտաբով կազմակերպել կոլեկտիվ արտադրությունը: Զքափոր-միջակ խավերը խոշոր տնտեսություն կազմակերպելու փորձ չունեն: Նրանք սովորել են աշխատել առանձին-առանձին, անհատապես, մանր տնտեսության շրջանակներում:

Հիմա դրությունը շեշտակիորեն փոխվել ե, պետք ե վերընտելանալ այդ դրության:

Միայն բանվոր դասակարգը խոշոր արտադրության մեջ (գործարան) ունեցած իր հմտությամբ, կազմակերպելու և կառավարելու (արտադրությունը) իր ունեցած արդեն հարուստ փորձերով ի վիճակի յե կատարելու սոցիալիստական խոշոր յերկրագործության կազմակերպչի դերը, վորը (սոցիալիստական խոշոր յերկրագործությունը) հողագործների հիմնական մասսային դուրս ե

բերում աղքատության, զբկանքների և անկուլտուրականության վիճակից: Վճռել այդ խնդիրը, նշանակում ե ապահովել նոր կողմակերպված կոլխոզների մասսայի համար, մասնավորապես արդեն այս գարնանացանի կամպանիայում, բոլոր արտադրական խնդիրների լուծումը (ցանքսերի տարածության ավելացում, վաղ ցանքս և այլն), նշանակում ե գյուղում ամրապնդել բանվոր դասակարգի ազդեցությունը, նշանակում է ապացուցել նրա ունակությունը՝ իր հետեւից սոցիալիստական ճամպով տանելու գյուղացիությանը՝ վերջնիս համար ուղղակի ողբատով, վորն անկամակած, մեծապես կրաքացնի ու կամրապնդի բանվորի ու միջակի զինակցությունը:

Չեմ հիշում, թե այստեղ խստողներից ով փորձեց վիճելի դարձնել այդ խնդիրը, վորպես վրձողականներից մեկը կուեկտիվացման գործում, հակադրելով նրան կոլխոզների քանակական աճման խնդիրը: Այդ վիճը սխալ ե: Ճի կարելի մեկը մցուսին հակադրել Արդ մասսին յես պիտի խոսեմ մի փոքր ստորե, իսկ այժմ յես կանգ կառնեմ և կշեշտեմ մի մոմենտ, վորը ցույց կտա այդ հակադրման ամբողջ անհեթեթությունը: Մենք պետք ե համականանք մի բան, վոր կուեկտիվացման տեմպերի հարցն արդեն լուծված ե և վոյ

այնքան մեր, վորքան իրենց— չքավոր-միջակ մասսաների կողմից, կոլխոզում նրանց մասսայական մուտքով, վորը պատասխան հանդիսացավ կոլեկտիվացման վերաբերյալ մեր կոչին։ Մեր նոյեմբերյան դրությը— մինչև 1931 թվականի գարունը հիմնականում կոլեկտիվացնել Հյուսիսային-Կովկասյան յերկրամասը— իսկ այն ժամանակ վոմանք ծաղրի յելին առնում մեզ վորպես ուտոպիստների— կյանքում ընթացք ե ստացել և այժմ պարզ ե, վոր այդ ժամկետը յերկար ե, մենք բանաձևում առաջարկում ենք մինչ 1930 թ. գարունը հիմնականում կոլեկտիվացնել դաշտարուծական ուայոնները։ Այստեղ գյուղացին ինքը մեզ ուղղեց։ Այդ ուղղումը սարսափելի չե։ Այսպիսով, կոլեկտիվացման տեմպերի հարցը լուծված ե, լուծված ե իրեն, միջակի կողմից, վորն ասաց, թե «յես կոլխոզ կզնամ»։ Արդեն նա լայն հոսանքով գնաց կոլխոզ։ Վերջինս կազմակերպելու իշնդիրը մեր առաջ կանգնած ե, բայց այժմ այդ այնքան ել դժվար գործ չե, յեթի դրա համար ճշտորեն նախապատրաստել մասսաներին, մի լավ աշխատել բատրակության ու չքավորության մեջ և համառորեն հարվածել կուլակին։ Այժմ մեզ համար կարեոր ե մի ուրիշ, ավելի դժվար խնդիր, կոլխոզներ մենք կազմակերպում ենք, բայց ար-

ոյնք կկարողանա՞նք այդ կոլխոզներում կազմակերպել նրանց արտադրության միջոցները, աշխատանքը, հավաքել սերմացուները, կերը և գյուղատնտեսական արտադրական պրոցեսների համապատասխան տեմպերն ապահովել այնպես, վորպեսզի գարնանը ստացվի ցանքսերի տարածությունների լայնացում, կիրառվեն համապատասխան ագրոտեխնիկական միջոցառումներ, վորոնք բերքի բարձրացում են տալիս և այլն։ Ահա թե այժմ ինչից պիտի բռնել, վորտեղ նետել ույժերն և ուշագրությունը, մանավանդ, վոր ցանքսի ժամանակը սարերի հետեւում չե։

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԸ

Այժմ վճռականը հանդիսանում ե կոլխոզի նախապատրաստությունը գարնանացանի կամպանիային, վորպեսզի կոլխոզը տանուլ չտա այն։ Ցիթե մենք, վոր հաջողեցրել ենք միջակի մասսայական մուտքը կոլխոզում, վոր կոլեկտիվացման տեմպերի հարցը լուծված ե, — չկարողանանք ինչպես պետք ե անցկացնել գարնանացանի կամպանիան, ապա այդ փաստորեն պիտի նշանակե մեր ձախողումը, այդ և՛ մեզ և՛ կոլեկտիվացումը կվարկաբեկի չքավորի ու միջակի աչքում, ալդի վերջո կլինի ջուր՝ կուլակի ջրաղացին։ Պետք ե

հասկանալ այդպիսի ձախողման քաղաքական
նշանակության ամբողջ լրջությունը և հաջողե-
ցնել այն, վոր բոլոր կուսակցական, խորհրդային,
կռոպերատիվ և այլ կազմակերպություններն ի-
րենց ուշադրությունը կենտրոնացնեն ցանքսային
կամպանիայի կազմակերպման վրա։ Յէս չեյի
կանդ առնի այդ հարցի վրա, յեթե արտահղ, Յէր-
կրկոմի պլենումում մի քանի ընկերներ չցուցա-
բերեյին անհասկացողություն տվյալ գարնանա-
յին կամպանիայի կազմակերպման և դժվարու-
թյունների ամբողջ լրջության հանդեպ։

Ընկերների մի մասը պահանջում եր շատ
պարզ կերպով լուծել այդ հարցը և գնում եր
ամենասակավ դիմադրության գծով, յերբ այս
ամրիոնից հարց եր գնում սերմվոխատվության
մասին, փոխանակ լարելու ույժերն և պատմելու
այն մասին, թե նրանք ինչպես են ստեղծում հա-
մայնական սերմնափոնդերը։

Այժմ պետք ե պարզ պատկերացնել հետևյա-
լը — գյուղացիական տնտեսությունների հիմնական
մասսան մտնում և կոլխոզ։ Վորպեսզի նրանց
ցանքերն ապահովել սերմոցոյցով, արկավոր և
այնքան սերմացու, վորքան առաջ, ցանքսային
կամպանիայում, ցանում եր ինքը, գյուղացիու-
թյունը։

Գետության կողմից դրա համար վոչ մի մի-
ջոց և հացի սեսուրաներ չեն բավականանաւ։
Հապա, իսկ յեթե գյուղացին չմտներ կոլխոզ, նա
կոտանե՞ր սերմացու։ Այսո, այդ սերմացուն նա ունի,
թող ուրեմն հիմա տա կոլխոզին, Նրա տվածը
հաշվի նրա ֆալի մեջ։ Մեր անելիքն և՝ հա-
վաքել սերմացուները, սրանցից ֆոնդեր ստեղ-
ծել և տպահովել կոլխոզների ցանքսային պլանը։
Պետք ե հաջողեցնել, վոր գյուղացին, կոլխոզի
զարգացման համար, այնտեղ մուծե վոչ պակաս
միջոցներ, քան առաջ, մինչ կոլխոզ մտնելը, նա
մուծում եր իր տնտեսության մեջ։ Այստեղից
բղիում ե կոլխոզի խնդիրը — զորահավաքել իրեն,
գյուղատնտեսության արտադրության միջոցները
(ձեկան, մեռած ինվենտար, սերմացու, կերեր,
դրամ և այլն), առանց վորի այդ անտեսությունն
անյերեակացելի յեւ Զե՞ վոր մինչ այդ՝ գյուղա-
ցիությունն ամեն տարի միլիարդներով ոռութի-
ներ եր ծախսում իր գյուղատնտեսության համար
(մերենաների գնում, սրանց վերանորոգում, կե-
րերի ու սերմացուների ծախս և այլն)։

Գետությունը կրկնապատկել ե կոլխոզների
վարկավորումը, հասցնելով այն մինչեւ 500 մի-
լիոն ռուբը։ Գետությունը մեծ հնարավորություն
ներ չունի, մնացածը (նյութական ու դրամական

միջոցներ) պետք ե գտնել հենց գյուղատնտեսության մնջ, վորպեսզի հիմա, մասսայական կոլեկտիվացման ժամանակ, ապահովվի գարնանացանի կամպանիայի հաջող ընթացքը։ Հասկանալի ին, վոր այժմ գյուղացին այլ կերպ ե ուզում իր համար լուծել հարցը։ Նա դադարեց սեփականատեր լինելուց և նա կոլխոզնիկ ին, բայց դեռ կոլեկտիվիստ չե։ Նա մտավ կոլխոզ ու մտածում ե. թող հիմա պետությունն ինձ ապահովե։ Յեվ այն սերմացում, վորն առաջ ցանում եր և վոր նա ունի, նա առանձնապես պատրաստ չե տալու համայնական, կոլխոզային ֆոնդը։ Այն դրամը, վոր առաջ նա ծախսում եր անասուններին կերպերելու, ինվենտար գնելու և վերանորոգելու համար, նա նույնպես ուզում ե ամրողջովին թողնել իր գրանում և ալղպես անվերջ։ Այն միլիոնավոր ռուբլիները, վոր նա առաջ, յերկրամասում, ամեն մի գարնանացանի կամպանիայի նախորելին մուծում եր իր գյուղական անտեսության մեջ, նա հիմա կաշխատե չտալ կոլխոզին։ Մեր անելիքն ին կոլխոզի միջոցով հավաքել այդ միջոցները, վորովհետև առանց վերջիններիս չի կարելի, սկսել գործը, վորով նա ինքը—չքավորն ու միջակը շահագրգոված ե, վոր այդ հեշտ չե, պարզ ե ամեն մեկին։

Ամենաառաջին մարտական խնդիրն ե՝ ամենամոռ մի-յերկու շաբաթում զորահավաքել նախ և առաջ սերմանափոնդերը։ Միտներդ պահեցեր, վոր պետությունը սերմափոխատվություն տալ չի կարող, վոր այդ կետին պետք ե խփ լ, յերեսում և նրանից, վոր սերմանափոնդերի ստեղծումն անցնում ե գերազանդաղ։ Դուքս ե գալիս, վոր մեզանում հնարավոր են նույնիսկ այնպիսի փաստեր, յերբ կոլխոզը վճռում ե գարնան համար ծրագրված ցանքսերի տարածությունն ապահովել միայն իր սերմացույի և տոկոսով, իսկ մնացածն իրը թե պետությունը պիտի տաւ, Յեթի գործն ամեն տեղ այդպես գնա, ապա ցանքսէ կամպանիան հարվածի տակ կրնենք և այն ժամանակ համատարած կոլեկտիվացումը կտա վոչ թե գլուղատնտեսության վերելք, վոչ թե դժվարությունների հաղթահարում, այլ ընդհակառակը, կարող ե ուժեղացնել դրանք, Բայց այդ կտեղծվի միայն այն դեպքում, յեթե մենք ձեզ հետ չինենք զեկավարման բարձրության վրա, յեթե մենք «զիլսարկ չունենանք մեր գլխին»։

Գարնանացանի կամպանիայի հաջող անցկացումը համատարած կոլեկտիվացման հետ հանդիսանում ե առաջնագույն խնդիր և մեկը լուրջ տարբերից, վորը ցույց կտա կոլեկտիվ տնտե-

սությունը կարող կերպով ղեկավարելու մեր ունակությունը և այդ հիման վրա կազմակվե մեր զինակցությունը միջակի հետ:

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՍԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Հիմա յես կուզենայի ներկա մոմենտի կապակցությամբ և ազգային շրջանների վերաբերյալ տասձններս լրացնելու համար ևս մի քանի դիտություններ անել:

Ազգային շրջանները նույնպես թեակոխել են սոցիալիստական վերակառուցման շրջանը: Այդ ինչիրը լրացնելու համար այժմ քաղաքական ու տնտեսական ույժերը բավականաչափ են, բայց այնտեղ հիշալ շրջանը պիտի անցնի ավելի սուր, դասակարգային պայքարը պիտի լայնանալ: Պալման ների բարդությունը գումարվում է այնպիսի յերեսութներից, ինչպիսին են մինչևապիտալիստական տարրերի մնացորդները: Մասնավոր-կապիտալիստական կուլտային տարրերի տնտեսական ազդեցությունը առւլի սակավագոր խավերի վրա դեռ զգալի յեւ Այդ բոլորի հետ միկտեղ, մասսաների ընդհանուր յետամնացությունը և ցածր կուլտուրական մակարդակը հող են ստեղծում հոգեռականության ուսակցիոն ազդեցության հա-

մար: Մակայն, չնայելով բոլոր տվյալ հանդամանքներին ու դասակարգային հարաբերությունների անխուսափելի, շեշտակի սրման, մենք պետք ե լուծենք ազգային շրջանների տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրը: Այն քան, վորքան այնտեղ պայմաններն ավելի կդժգանան, ավելի կսրվի պայքարը, պետք ե ավելի վճռականորեն դնել ազգային շրջաններին ոգներու հարցը: Մասնավորապես անհրաժեշտ ե շեշտել արեմիությունների գերն այս գործում:

Զգիտես ինչու, մեր շեֆնկերություններն ավելի յեն կենտրոնացնում իրենց ուշադրությունը ուսուական գյուղի վրա և ստվերի մեջ են թողնում ազգային շրջանները. գուցե նրա համար, վոր ուսուական գյուղի տեսակարար կշիռն ավելի՞ ուժեղ եւ ինչո՞ւ ուսւ բանվորների շեֆությունը չզարգացնել նաև ազգային շրջանների վերաբերմամբ: Արդյոք այդ կամրապնպի՞ բանվորական ազդեցությունն ազգային շրջաններում, թե՞ վոչ: արդյոք այդ կանոնիսանա՞ լուրջ և վեճը ուսական ոգնություն՝ ազգ: շրջաններում դասակարգային թշնամու դեմ պայքարելու, այդ նպատակով չքավորությանը կազմակերպելու գործում: արդյոք այդ կողմնե՞ կազմակերպի ստեղծումն արագացնելուն և սրանց ազգ: վիզբամասնություն-

Ներից առաջ քաշելուն. արդյոք այդ՝ կուժեղացնի՝
աղղեցությունը միջակ մասսաների վրա. արդյոք
այդ կաջակցե՞ս խորհրդային ապարատի բարե-
ւագման և այլն.—անկասկած: Յեզ ինձ թվում ե,
վոր պետք և ստիպել մեր արհկազմակերպու-
թյուններին աղղային շրջաններում անցնելու ա-
վելի ակտիվ աշխատանքի, մասնավորապես, աղ-
դային շրջանների վրա պրոլետարական շեֆու-
թյունն ավելի լայնորեն դարդացնելու միջոցով:

Դասակարգային սրված պայքարի, կուսակ-
ցության ու Խորհրդային իշխանության բոլոր
միջոցառություններին կուլակության ու հոգեորակա-
նության ցույց տված հուսահատական դիմադրու-
թյան պայմաններում, յերբ թշնամին պիտի ոչ-
տրվի մեր ամեն մի չնչին վրիպումով և մաս-
նակորապես պիտի գրգռե նացիոնալիզմը, մեր
անելիքն ե՝ առանձնապես ուշիմ և վճռականորեն
վերաբերվել և պայքարել մեծապետական շովի-
նիզմի ամեն տեսակ արտահայտության դեմ, վո-
րի (շովինիզմի) մնացորդները դեռ այս կամ այն
ձևով գտնում են իրենց արտահայտությունը և
մասավանդ պետական ապարատի միջոցով: Այդ
խնդրին զուգընթաց՝ պետք և ապահովվի նաև
հարգած տեղական նացիոնալիզմի դեմ, քանի

վոր կուլակն ամեն կերպ պիտի փորձե գրգռե
ու բարձրացնել այդ նացիոնալիզմը:

Ազգային կուսակազմակերպություններն իրենց
հիմնական խնդիրը պիտի զարձնեն վճռական
պայքարը կուլակի դեմ, պայքար՝ ամբողջ աշխա-
տանքում դասակարգային ճշգրիտ գիծն իրակա-
նացնելու համար, ամեն կերպ ուշադրությունն
ուղղելով տնտեսության սոցիալիստական վերա-
կառուցման վրա: Բայց, դրա հետ մեկտեղ, աղ-
գալին կուսակազմակերպությունները պետք և
վճռականապես խորտակեն ամեն տեսակ փորձե-
րը՝ ուռւսական շրջանների փորձն ամբողջովին,
առանց աղղային շրջանների յուրահատկության
ու պայմանների հաշվառման, այս շրջանները փո-
խադրելու:

ՅԵՐԿՐԱՍՍԱՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑ- ՄԱՆ ՍԱՍԻՆ

Հիմա մի քանի խոսք մեր բանաձեկ^{*)} մի քանի
մուենտների մասին, վորոնք, ըստ իս, անհրաժեշտ
ե առանձնապես շեշտել: Առաջին դիտողությունն
յերկրամասի տնտեսության սոցիալիստական վե-
րակառուցման գլխավոր գրույթի մասին ե: Մենք

*.) Խոսքը վերաբերում է Յերկրումի պենումի բանա-
ձեկն (Ժ. թ.):

գտնում ենք, վոր յերկրամասի զարգացումը կընթանա արդյունաբերության և գյուղատնտեսության ավելի և ավելի մեծ փոխադարձ կապի ճշնապարհով։ Անկասկած, մեր առաջ խնդիր ե զըրգում բարձրացնել արդյունաբերության զարգացման տեմպերը—թե համամիութենական նշանակություն ունեցող՝ արդյունաբերական խոշորագույն ճյուղերի (ածուխ, նավթ, մետաղամշակություն) զարգացման ուղղությամբ, թե գյուղատնտեսության պահանջները բավարարելու գծով, նրան տեխնիկապես վերասպառագինելու իմաստով (Սելմաշստրոյ, կոմբայների գործարան, Արմալիտի, «Ակսայի» վերակառւցում և այլն) և գյուղատնտեսական արտադրանքի (պահոծների արդյունաբերություն, մսի կոմրինատ, բամբակի, շաքարի գործարաններ և այլն) վերամշակության համար։ Իսկ այդ իր հերթին պահանջ ե դնում գյուղատնտեսության առաջ զարգացնել անասնաբուծության, տեխնիկական կուլտուրաների (բամբակ, կենաք և ալյն) համապատասխան ճյուղեր ... Յերկու հիմնական ճյուղերի (արդյունաբերության և գյուղատնտեսության) զարգացման արդարիսի ներդաշնակումը ունակ և իրազործելի յե զարձնում ճյուղային

Կովկասը ԽՍՀՄ մի ինդուստրիալ - ագրարային առունի վերածելը։

Յերկրորդ՝ սա մասամբ բղխում ե արդեն ասվածից— այդ իրեն, գյուղատնտեսության տընտեսական դեմքի փոփոխություն ե՝ շատ աշխատանք պահանջող և ամենայեկամտավոր կուլտուրաների բամբակ, բրինձ, սոյա, այգեբուծություն և այլն) և անասնապահության ամենալայն զարգացման իմաստով։ Դրա անհրաժեշտությունը շեշավում ե նախ՝ նրանով, վոր գյուղատնտեսությունն այդ (պիսով պիտի զարգանա իր ամենախնտենսիվ տեսակներով ու ձեռքով և յերկրորդ՝ ապահովում ե ամենամեծ չափով բանվորական ույժի գործադրությունը և արդ բոլորը նպաստում ե կոլխոզների զարգացման։

Յես ընդգրածակորեն չեմ խոսելու այն խնդիրների մասին, վարոնք գրված են արդյունաբերության վերաբերմաբ։ Բանաձևի պրոյեկտում նըրանք բերված են բավականաչափ ճշգրիտ։ Յես կուգենայի շեշտել այսպիսի խնդիրների ակտուալ լինելը, ինչպիսին են՝ արտադրական ծրագրերի կատարումը, ինքնարբեքի իջեցումը, աշխատանքի արտադրողականության և աշխատանքալին դիսցիպլինայի բարձրացումը, պայքար կորստների դեմ—ահա տարբեր, վորոնք վճռական են հանդեմ—

գիսանում սոցիալիստական ընդլայնված վերարտադրությունն ապահովելու բնագավառում։ Հիմնական կապիտալն ամենաուղիղ կերպով ոգտագործելը, անընդհատը, աշխատանքի բազմահերթ լինելը, արդյունաբերության մեջ պայքարը կորուստների դեմ—այս բաները նոր, լրացուցիչ ռեսուրսներ են տալիս մեր արդյունաբերության աճման համար։

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՅԻՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՍԱՍԻՆ

Եես ասացի, վոր կոլեկտիվացման տեմպերի հարցն արդեն լուծված ե։ Մենք տեմպերը գորոշել ենք. մեր խնդիրն ե—մինչև 1930 թ. գարունը համատարած կոլեկտիվացմանը ընդգրկել ուղական շրջանների դաշտաբուծական ռայոնները։ Մեզ հարկավոր ե մեր վորոշումներում շեշտել այնպիսի կոլխոզների ստեղծման խնդիրը, վորոնք տնտեսության ավելի բարձր սոցիալիստական ձև ունեն։ Այս թե ինչու տվյալ շրջանում կոլեկտիվացման հիմնական տիպ մենք ընդունել ենք արտելը։

Այսուհետև ուշադրության կենտրոնում դնել կոլխոզի աշխատանքի վորակի համար պայքարելու հարցը—արտադրական ծրագրի կազմումը,

արտադրական կանխիկ միջոցների մաքսիմալ (րեռնվածություն) ոգտագործումը,—վորոնք զլունվում են գյուղատնտեսության մեջ, իսկ այդ, մասր անհատականից դեպի համայնացված տընտեսություն անցնելիս բաց ե անում արտադրական հսկայական հնարավորություններ, —ներքին կարգապահությունը, կոլխոզնիկների աշխատանքի կազմակերպումը, սերմացույի ու կերի ֆոնդերի ստեղծումը և այլն։ Կոլխոզների համար առանձին նշանակություն ունի սերմֆոնդերի ստեղծումը՝ վորը տվյալ մոմենտի համար վճռողական հարցերից մեկն ե կազմում։

Հարկավոր ե նաև կանգ առնել մի մոմենտի վրա, այն սոմենտի, վորի մասին խոսում եր իւյիշը—«մասնավոր շահը հասարակական շահին միացնելու աստիճանը» գտնելու կարողության մասին։ Յես ուզում եմ շետել բանաձեռի պրոյեկտի այն մասը, վորը մատնանշում ե, թե միջակը կոլխոզում մուծման իրավունքով համայնացնում ե արտադրության այն միջոցները, վորոնք գերազանցում են սահմանված փայի չափը, նա (միակը) այդ մուծման համար ստանում ե վորոշակը, իսկ կոլխոզը, հետզհետե ամրապնդվելով՝ տոկոս, իսկ կոլխոզը, հետզհետե ամրապնդվելով՝ ակարող ե յետ գնել միջակի այդ փայը։ Այդ ճանապարհով մենք ի՞նչ ենք հաջողեցնում։ —խթանապարհով մենք հաջողեցնում։

Նում ենք արտադրության միջոցների և մթերատու անասունների համարնացման պրոցեսով և բավարարում ենք առանձին տնտեսությունների մասնավոր շահին, վորով արագացնում ենք կոլեկտիվացման պրոցեսով:

Մի քանի ընկերներ վախենում ենին, վոր մուծման, սրա տոկոսների և յետզնման իրավունքի սահմանումը կկազմալուծե կոլխոզը: Այդ ճիշտ չե: Յեթե կոլխոզը պիտի զարգանա-իսկ մենք հենց դրա համար ենք այն ստեղծում—ապա միջակը կարիք չի ունենա յետ քաշել միջոցները: Հասարակական կարծիքն ել զեմ կլինի այդ բանին, իսկ կոլխոզ մտնող մասսաների անձնական շահագրգովածությամբ մենք կստեղծենք և քաղաքականապես կօմբապնդենք մեր դիրքերը համատարած կոլեկտիվացման ժամանակ, վորն անխուսափելիորեն կապահովե նրա անցկացման ամենամեծ հաջողությունը:

Յես ասացի, վոր կոլխոզը հանդիսանում ե անտեսության սոցիալիստական ձե, բայց միենույն ժամանակ նախազգուշացրի՝ չմոռանալ այն դժվարությունները, վորոնք առաջին հերթին պիտի կուտակվեն նրանից, վոր կոլխոզ մտնող գյուղացին կոլխոզիկ և, բայց կոլեկտիվիստ չե: Նա իր հետ կբերե մասնավոր - սեփականատիրական

սովորություններ, ընտելություններ և հոգեբանություն: Հասարակական արտադրությունը կազմակերպելիս մենք պետք ե հաղթահարենք այդ անցյալի մնացորդները—հասարակական աշխատանքային դիսցիպլինայի ստեղծման, աշխատանքի բարձր արտադրողականության համար պայքարելու, արտադրության լավագույն կազմակերպման միջոցով: Այս գործում կարելի յե հենվել միայն բատրակության և չքավորության վրա: Անա թե ինչու կոլխոզներում պարտադիր ե հանդիսանում բատրակ-չքավորական խմբակների կազմակերպումը: Զպետք ե մոռանալ, վոր սեփականատիրական հոգեբանության վերակերտման խընդիրը մի շարք տարիների ընթացքում կանգնած կլինի մեր առաջ և այդ ուղղությամբ կպահանջե համառ ու համառ աշխատանք:

Կոլխոզային շարժումը գյուղացիական շարժում ե, այստեղից բջիսում ե մի խնդիր—ույժերի համապատասիան դասավորման և լծակների միջոցով ապահովել պրոլետարական պետության աղքացությունը կոլխոզշնարարության վրա: Այս տեսակետից մի առանձին, սկզբունքալին նշանակություն ե ձեռք բերում բանաձեռի պրոյեկտի կություն և ձեռք պահանձին պատճենագործության մասը, վորը խոսում ե սովորողների ու ՄՏԿ այն մասը, վորը խոսում ե սովորողների մասին, վորպես պրոլետարական պետության

ձեռքում գտնվող ագրոհներգետիկ բաղաների մասին, կոլխոզային տնտեսության վերաբերյալ նրա (պրոլ. պետության) ղեկավարությունն ապահովելու համար: Խոշոր սովորողները (սրանց թիվը յերկրամասում պիտի լինի 111 ից վոչ պակաս) և 182 ՄՏԿ պետք ե մաքսիմալ չափով ոգտագործվեն վորպես լծակներ կոլխոզներին մեր ընդհանուր սոցիալիստական ծրագրին յենթարկելու համար: Այդ բազաներում պիտի կենտրոնացվեն արտադրության հիմնական միջոցները, կազմակերպչական, ագրոնոմիական լավագույն ուժերը և այլն: Առանձին պայմանագրերի հիմունքով—վորոնք նախատեսնում են մեկ կողմից սովորողների ու ՄՏԿ և մյուս կողմից կոլխոզների փոխադարձ պարտավորությունները—կազմվում ե միասնական արտադրական պլան: Մենք արդեն սկսել ենք «Գիտանու» և «Խուստորոկ» սովորողների շուրջը ստեղծել սովորողի և կոլխոզների յերկու այդպիսի կոմքինատ:

ՎՃՐՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ի՞նձ թվում ե, զոր աժմ վճռողական նշանակություն ունեն չորս խնդիրներ: առաջին—ապահովել սոցիալիստական ընդլայնված վերաբերությունը, մանավանդ ինդուստրիալի բնա-

գավառում: յերկրորդ—զիմավորել և կազմակերպել համայնացված, խոշոր գյուղատնտեսական արտադրությունը. յերրորդ—կազմակերպել ու զաստիպարակի աշխատավորների մասսաներին, սրանց մեջ լայն չափով խորացնել սոցիալիստական արագիցիաներն ու ընտելությունները, հակառակ սեփականատիրական, գիշակեր ու շահախնդիր սովորույթների՝ ռառզարդու գրպանդ, —պայքարել բարձր արտադրողականության ու աշխատանքային դիսցիպլինայի համար և չորրորդ—սրել մեր ուշադրությունը կուլակին վորպես դասակարգ վոչնչացնելու, տնտեսապես նըան լիովին զինաթափելու և քաղաքականապես վճռաբարձզմելու վրա:

Հնկերներ, Հյուսիսային կովկասի համար մենք ունենք շատ լայն ու պատասխանատու շինարարական ծրագիր, վորն ուղղված ե զեպի մեր ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակերտումը: Զպետք ե մոռանալ վոր այդ ծրագիրը մենք ի վիճակի կլինենք իրականացնել միայն երեսց, աշխատավոր մասսաների զորահավաքման գեպօւմ, բանվոր դասակարգի ղեկավարությամբ: Այստեղ հանգես յեկան առանձին ընկերներ, մատնանշելով շինարարությանը նախպատրաստվելու ուշացումը: Այդ դատարկ բան չե,

այլ լուրջ և կարող ե դանդաղեցնել հիմնական շինարարության ամբողջ ծրագրի իրականացումը:

Մեր Հյուսիսային կովկասի սոցիալիստական վերակերտման ծրագիրը հաջողությամբ կիրառելու ամենաառաջին պայմանը մասսաների զորահավաքն ե, հասարակական-պրոլետարական վերահսկողությունն ամբողջ աշխատանքի վրա: Այս տեսակետից սոց. մրցությունն և ինքնաքննադատությունն այժմ ամենահսկայական նշանակություն են ձեռք բերում և անչափ բարձրանում ե արհմիությունների գերը, վորոնք ավելի մեծ չափով պիտի յերեսները դարձնեն դեպի արտադրությունն և դառնան պրոլետարիատի այժմ աճող ակտիվության կազմակերպիչները: Աշխատավորական լայն մասսաներում մենք ունենք ենտուզիազմ, հարկավոր ե համառորեն կազմակերպել այդ ենտուզիազմը և աշխատավորների մասնակցությունը սոց. վերակերտման: Մեր կուսկազմակերպությունը պետք է ապահովի ուշադրությունն ալդ հարցին: Սրա վրա յես կանգ եմ առնում բացառապես նրա համար, վոր մեր կուսկազմակերպության աշխատանքն այդ ուղղությամբ բավականաչափ չե: Դեռ ես չի ապահոված սիստեմատիկ, ամենորյա ուշադրությունն ու հոգատարությունը սոցիալիստական մրցման

և ինքնաքննադատության, արհմիությունների աշխատանքը բարելավելու և նրանց դեկավարելու վրա: Պետք ե ապահովել ավելի լուրջ ուշադրություն դեպի ալդ յերեք խողիրները—սոցիալիստական մրցությունը, ինքնաքննադատությունն և արհմիությունների աշխատանքի բարելավումն ու վերակառուցումը:



Գյումրու Առաջնեղա Ըստի տուարածնցացնի և
առաջախայքը ցանցը և այժմայդղաց ցամասալցու
տուարացը Ֆեռու վայսան յմբուժաւա և զամթ առյի
ապահցու—ցղմողիրով ցղմու իւս գրքը մարկի
և ուղի տուարածնցացնի ցամասալցու մաթառ
մասիսայնազ ոյցառաւալցու դիմուլ կազմենա և
ցանցառամբազմի և



ՀՀ Ազգային գրադարան



NL0220022

ԳԻՒՆ Ե 5 ԿՈՊ.

30.154

2

58

ՏԾԿ

ԱԲԴ

ՏԾՕ